ուզէր անօգուտ մարտիրոսներու թիւը աւելցնել: Ինձ աւելի սիրելի է այդ անարգ, մոլի եւ անպիտան նախարարաց գլուխը կորզանել իրենց գահոյքը՝ այդ դարաւոր բազմագլխեան վիշապը, որ նախարարութիւն կ'անուանեն, ջնջել, անհետ ընել, որ Հայաստան գլուխ մը միայն ունենա եւ ժողովուրդ մը եւ լինի մի հոտ եւ մի հովիւ: Միթէ՞ մեր ամէն թշուառութեանց պատճառ անիշխանութիւնը չէ՞, որու առանց խելահաս լինելու անմիաբանութիւն անուն տուեր են եւ պիտի տան գարուց ի դարս: Հիմա ինձ այն զրուցէ, թէ դու կ'ուգա՞ս քու ազգիդ փրկիչ եւ գլուխ լինիր Եթէ յանձն կառնուս՝ երկու գեղեցիկ ճամփայ կայ առաջդ. եթէ մեռնիս՝ երկնի թագաւորութիւն, եթէ ապրիս՝ երկրիս թագաւորութիւն: Երկուքն էլ խոտելի չեն:

— Անցեալ տարի պէտք էր քու խորհրդիցդ հետեւիլ, այս տարի շատ ուշ է:

— Շատ կը վախեմ, որ գալ տարի նաեւ երբ ես այս աշխարհքս թողած լինիմ, դու ըսես իմ ետեւես՝ «Ափսո՜ս, պէտք էր այն մարդուն խօսքին հետեւիլ»:

— Դու որ այդ խօսքը կ'ըսես՝ ի՞նչ վիճակ կը տեսնես Հայաստանի համար:

— Յայտնի է վիճակը. դու որ Հայոց Սպարապետն ես, Բագրատունեաց գահագլուխ՝ չե՞ս տեսնէր թէ ամառ մը բաւական եղաւ մահմեդականին Հայաստանու կէսը ոտնակոխ ջախջախել. չե՞ս տեսնէր այս ամառ միւս կէսն էլ նոյն վիճակը պիտի գտնէ՝ եթէ շարժմունք եւ դիմադրութիւն չլինի: Անկից վերջ թող սպասէ հայը ստրուկ՝ անզէն եւ շղթայակապ, որ իւր բարբարոս տէրը՝ իբրեւ ողորմութիւն թողու իրեն հացին այն պատառիկը, որ թշուառ գերութեան կեանքը շարունակէ, թողու իրեն կին եւ որդիք, երբ շղթայ եւ թշուառութիւն նոքա կը տգեղցնեն, թողու իրեն հող՝ մորթ եւ ոսկորը միայն ծածկելու համար: